


ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷԶՍ Արմենիա ֆոնդային բորսայում իրականացված առևտրային գործունեության համառոտ տեսություն



2009 թվականի III եռամսյակ


2009 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսներին ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷԶՍ Արմենիա ֆոնդային բորսայում իրականացվել է բաժնետոմսերի, կորպորատիվ և պետական պարտատոմսերի, ՌԵՊՈ գործիքների, ինչպես նաև արտարժույթի առևտուր: Ընդհանուր առմամբ եռամսյակի ընթացքում նկատվել է բորսայական առևտրի ծավալների աճ, բացառությամբ կորպորատիվ պարտատոմսերի շուկայի, որտեղ գրանցվել է առևտրի ծավալների մոտ 62% անկում՝ պայմանավորված որոշ պարտատոմսերի մարումով: Հաշվետու եռամսյակի ընթացքում բաժնետոմսերի շուկայում ավելացել է ևս մեկ գործիք՝ «Արաքս» ԲԲԸ-ի հասարակ անվանական բաժնետոմսերը (ARAX), ինչը և հիմնականում պայմանավորել է այս եռամսյակի ընթացքում բաժնետոմսերով առևտրի ծավալների կտրուկ աճը:



Բորսայական առևտրի ծավալների մեծ մասն ավանդաբար բաժին է ընկել արտարժույթով առևտրին (տես Նկար 1):

Բաժնետոմսերի բորսայական առևտուր

2009թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում բորսայում բաժնետոմսերով կնքվել է 10 գործարք՝ 82,630,900 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, մոտ 89 անգամ գերազանցելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը: Նման զգալի աճը պայմանավորված է սեպտեմբեր ամսին «Արաքս» ԲԲԸ-ի բաժնետոմսերով կնքված խոշոր գործարքներով: Եռամսյակի ընթացքում գործարքների առարկա են



հանդիսացել ՆԱՍԳԱԶ ՕԷՍԷԶՍ Արմենիա-ում ցուցակված «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ (HEZB), ինչպես նաև բորսայում առևտրին թույլատրված՝ «Արաքս» ԲԲԸ (ARAX) և «Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ (ESHG) ընդհանուր թվով 77,878 հասարակ անվանական բաժնետոմսեր:


30.09.2009թ.-ի դրությամբ ՆԱՍԳԱԶ ՕԷՍԷԶՍ Արմենիա-ում ցուցակված և առևտրին թույլատրված է եղել տաս թողարկողի 11 բաժնետոմս, իսկ բորսայական շուկայի ընդհանուր կապիտալիզացիան¹ կազմել է 50,341,318,400 ՀՀ դրամ, ինչը մոտ 5.38%-ով պակաս է 30.06.2009թ.-ին գրանցված շուկայի կապիտալիզացիայից՝ պայմանավորված «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ բաժնետոմսերի շուկայական գնի 47.06%-ով նվազմամբ:

Կորպորատիվ պարտատոմսերի բորսայական առևտուր

2009թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում ՆԱՍԳԱԶ ՕԷՍԷԶՍ Արմենիա-ում կորպորատիվ պարտատոմսերով կնքվել է 142 գործարք՝ 1,072,098,103 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով: Գործարքների առարկա է հանդիսացել 10 թողարկողի 81,497 պարտատոմս:

Նախորդ եռամսյակի համեմատ կորպորատիվ պարտատոմսերով կնքված գործարքների քանակը, գործարքների առարկա կորպորատիվ պարտատոմսերի քանակը և գործարքների ծավալը կրճատվել են, համապատասխանաբար, 16.47%-ով, 84.90%-ով և 62.12%-ով (տես Նկար 3), ինչը պայմանավորված է եղել, մասնավորապես, այս եռամսյակի ընթացքում «Տոնտոն» Ինվեստիցիոն ՍՊԸ (TNTNB1) պարտատոմսերի մարմամբ և «Վալլետտա» ՍՊԸ (VALTB3) պարտատոմսերի ցուցակման դադարեցմամբ և Bbond բորսայական ցուցակից Cbond ազատ շուկա դրանց տեղափոխմամբ: Միաժամանակ 2009թ.-ի հաշվետու եռամսյակի ընթացքում կորպորատիվ պարտատոմսերով կնքված գործարքների ծավալը և քանակը, հապատասխանաբար, 2.6 և 1.2 անգամ գերազանցում են 2008թ.-ի նույն ժամանակահատվածի ցուցանիշները:

Բացի այդ, հաշվետու եռամսյակի ընթացքում կորպորատիվ պարտատոմսերի շուկայում կնքվել է 6 հասցեական գործարք՝ 5,456,663 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով: Գործարքների առարկա են հանդիսացել 2 թողարկողների՝ «Էլիտ Գրուպ» ՓԲԸ և «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, 1,026 պարտատոմս:



¹ Շուկայի կապիտալիզացիան հաշվարկված է ՆԱՍԳԱԶ ՕԷՍԷԶՍ Արմենիա-ում 30.09.2009թ.-ի դրությամբ ցուցակված և առևտրին թույլատրված հասարակ անվանական այն բաժնետոմսերի համար, որոնցով ՆԱՍԳԱԶ ՕԷՍԷԶՍ Արմենիա-ում երբևէ կնքվել են գործարքներ:


30.09.2009թ.-ի դրությամբ ՆԱՍԴԱԲ ՕԷՄԷՔՍ Արմենիա-ում ցուցակված և բորսայական առևտրին բույլատրված է եղել 10 թողարկողի 12 պարտատոմս:

ՌԵՊՈ գործիքների բորսայական առևտուր

Հաշվետու եռամսյակի ընթացքում բորսայում կնքված ՌԵՊՈ գործարքների ծավալը կազմել է 1,386,284,069 ՀՀ դրամ՝ 2.16%-ով գերազանցելով նախորդ եռամսյակի ցուցանիշը: ՌԵՊՈ գործարքների առարկա են հանդիսացել «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ (SHNCB4), «Էլիտ Գրուպ» ՓԲԸ (ELTGB2) և «Վալլետտա» ՍՊԸ (VALTB2) պարտատոմսերը: Եռամսյակի ընթացքում մարված ՌԵՊՈ պայմանագրերի ընդհանուր գումարը կազմել է 1,250,002,254 ՀՀ դրամ:

Պետական պարտատոմսերի բորսայական առևտուր

2009թ.-ի երրորդ եռամսյակին պետական պարտատոմսերով բորսայական առևտրի ծավալը (զման գնով) կազմել է 1,223,214,907 ՀՀ դրամ, ինչը 198.52%-ով գերազանցում է նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը: Գործարքների քանակը նույնպես աճել է մոտ երեք անգամ, կազմելով 97 գործարք: Պետական պարտատոմսերով գործարքների մանրամասները բերված են Աղյուսակ 1-ում:




Աղյուսակ 1. 2009թ.-ի 3-րդ եռամսյակի ընթացքում պետական պարտատոմսերով կնքված գործարքներ

Ծածկագիր	Թողարկման ծավալ	Կնքված գործարքներ				Վերջին գործարք	
		Միջ. կշռվ. գին	Գործ. քանակ	Գործ. ծավալ (անվանական արժեքով)	Գործ. ծավալ (զման գնով)	Գին	Կնքման ամսաթիվ
AMGB10072186	12,379,800,000	12.5293%	22	287,000,000	253,441,796	12.5310%	30.09.2009
AMGB20072283	11,360,090,000	13.0686%	20	240,000,000	210,841,759	14.2509%	30.09.2009
AMGN36052110	13,187,414,000	7.8001%	1	10,000,000	10,003,820	7.8001%	27.08.2009
AMGN36265126	14,495,000,000	11.2431%	31	412,584,000	439,085,969	12.4950%	30.09.2009
AMGN60052135	8,780,060,000	9.5002%	1	10,000,000	9,790,000	9.5002%	04.09.2009
AMGN60147141	9,000,000,000	10.8962%	21	213,144,000	230,438,313	12.2763%	30.09.2009
AMGT52118096	1,000,000,000	6.2502%	1	70,000,000	69,613,250	6.2502%	10.07.2009
Ընդամենը			97	1,242,728,000	1,223,214,907		

Արտարժույթի բորսայական առևտուր

Նկար 5. 2008-2009թթ.-ին ԱՄՆ դոլարով կնքված գործարքներ (եռամսյակային կտրվածքով)



2009թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷՔՍ Արմենիան արտարժույթով կնքվել է 1,017 գործարք, բոլորը՝ ԱՄՆ դոլարով: Կնքված գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 59,224,592,184 ՀՀ դրամ (USD 157,090,000): Նախորդ եռամսյակի համեմատ ԱՄՆ դոլարով կնքված գործարքների ծավալը աճել է 25.94%-ով, իսկ գործարքների քանակը՝ 40.08%-ով: ԱՄՆ դոլարով բորսայական առևտրի ծավալների և գործարքների թվի դինամիկան ներկայացված է Նկար 5-ում:

ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷՔՍ Արմենիա

Մարբետինգի և հաղորդակցության դեպարտամենտ
 Հեռ.՝ 543321, 543329, 589151 | Լրաց. 115, 116
 Էլ.փոստ՝ info@nasdaqomx.am